

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2015 թվականի նոյեմբերի 13-ին

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 10. Ծանուցման ձևերը, ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման գրանցամատյանների և հաշվառված անձանց տվյալների հրապարակման կարգերը

1. Ծանուցման ձևերը, ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման գրանցամատյանների վարման և հաշվառված անձանց տվյալների հրապարակման կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

շարադրվել է նոր խմբագրությամբ՝

Հոդված 10. Ծանուցման ձևերը, ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման գրանցամատյանների և հաշվառված անձանց տվյալների հրապարակման կարգերը

Ծանուցման ձևերը, ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման էլեկտրոնային գրանցամատյանների վարման և հաշվառված անձանց տվյալների հրապարակման, էլեկտրոնային գրանցամատյաններից տեղեկատվության տրամադրման կարգը և անվճար օգտվող պետական մարմինների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 12. Ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման գրանցամատյանի վարումը

1. Լիազոր մարմինները վարում են ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման գրանցամատյաններ:

2. Ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման գրանցամատյաններում նշվում են՝

1) իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը.

շարադրվել է նոր խմբագրությամբ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը վարում է ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման էլեկտրոնային միասնական գրանցամատյան (այսուհետ՝ էլեկտրոնային գրանցամատյան), որը բաղկացած է լիազոր մարմինների կողմից վարվող ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման էլեկտրոնային գրանցամատյաններից:

2) իրավաբանական անձի գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի բնակության կամ հաշվառման վայրը.

3) գործունեության իրականացման վայրը (նշվում է, եթե օրենքի համաձայն՝ ծանուցման ենթակա գործունեությունը պետք է իրականացվի միայն ծանուցման մեջ նշված վայրում).

4) իրավաբանական անձի պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վկայականի համարը կամ ֆիզիկական անձի անձնագրի (նույնականացման քարտի) սերիան և համարը.

5) գործունեության տեսակը.

6) ծանուցման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը.

7) տեղեկություններ՝ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի կասեցման կամ դադարեցման մասին.

8) հաշվառման օրը, ամիսը, տարեթիվը.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկություններ:

— 3. Ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման գրանցամատյանի բոլոր էջերը համարակալում և կնքում է լիազոր մարմինը: Ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման գրանցամատյանները վարում են նաև էլեկտրոնային տարբերակով: Ուժը կորցրել է:

Հոդված 13. Ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց մասին տեղեկատվությունը

1. Ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման էլեկտրոնային գրանցամատյաններում բովանդակվող տեղեկատվությունները բաց

են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

2. Լիազոր մարմինները պարտավոր են պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների պահանջով երկու աշխատանքային օրվա ընթացքում ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման էլեկտրոնային գրանցամատյաններից անվճար տրամադրել համապատասխան տեղեկատվություն:

3. Ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման էլեկտրոնային գրանցամատյաններից այլ անձանց թղթային տարբերակով վերաբերյալ տեղեկատվությունը պետք է տրամադրվի նրանց դիմումն ստանալու օրվանից հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում: Նշված տեղեկատվության տրամադրման համար գանձվում է պետական տուրք:

3.1 Ֆիզիկական և իրավաբանական անձանց Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված վճարի և պետական տուրքի դիմաց էլեկտրոնային գրանցամատյանում պահվող այլ անձանց վերաբերյալ տեղեկությունները կարող են տրամադրվել առցանց:

4. Ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման էլեկտրոնային գրանցամատյաններից իրենց վերաբերյալ թղթային տարբերակով տեղեկատվությունը պետք է տրամադրվի նրանց դիմումն ստանալու օրվանից հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ անվճար:

4.1. Ֆիզիկական և իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցամատյանում պահվող իրենց վերաբերյալ տեղեկությունները անվճար կարող են տրամադրվել առցանց:

5. էլեկտրոնային գրանցամատյանին կից պետք է պահվեն նաև նշված տեղեկություններին վերաբերող բոլոր համապատասխան փաստաթղթերի պատճենները:

6. Լիազոր մարմինները ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի կասեցման, դադարեցման կամ կասեցված ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի վերականգնման մասին իրենց որոշումների պատճենները՝ դրանք ընդունելու օրվանից, իսկ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի դադարեցնելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռների պատճենները դրանք ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, հրապարակման համար ուղարկում են գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմին և հրապարակում են լիազոր մարմնի պաշտոնական կայքում և համապատասխան գրառում կատարում էլեկտրոնային գրանցամատյանում:

7. Ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի կասեցման կամ վերականգնման, ինչպես նաև ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու

իրավունքի դադարեցման մասին որոշումները կամ վճիռները հրապարակվում են «Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» հատուկ բաժնում դրանց ստացման օրվանից հետո՝ տասն օրվա ընթացքում:

Հոդված 14. Պետական տուրքը

1. Ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու, ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման **էլեկտրոնային** գրանցամատյաններից այլ անձանց տեղեկություններ տրամադրելու, ինչպես նաև այլ վայրում ևս ծանուցման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար գանձվում է պետական տուրք՝ օրենքով սահմանված կարգով և չափով:

2. Ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով կարող են նախատեսվել տարեկան տուրքեր: